**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 230-Ա

## ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման պահանջներով.,հիմք ընդունելով ՀՀ«Նորմատիվ իրական ակտերի մասին»օրենքի 37-րդ հոդվածը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրում գտնվող, 05-081-0158-0017 կադաստրային ծածկագրով, Մամիկոն Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող անասնաշենքի 0,0123 հա հատվածի հասցեն թողնել անփոփոխ/գ.Վահան 4-րդ փողոց 20 անասնաշենք/,իսկ առանձնացված անասնաշենքի 0,03014 հա հատվածը հասցեավորել որպես Ճամբարակ համայնք, գ.Վահան,4-րդ փողոց,20/1 անասնաշենք.,0,01457հա առանձնացվող հողամասը հասցեվորել որպես Ճամբարակ համայնք, գ.Վահան, 4-րդ փողոց, 20/2 հողամաս:
2. Անվավեր ճանաչել համայնքի կողմից 13.02.2024 թվականին տրված թիվ 162-Ա որոշումը:
3. Սույն որոշման հսկողությունը դնել քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

2024 թ. փետրվարի 29
ք.Ճամբարակ